Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-052-28.09.2021,09.11.2021-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշվեքննիչ պալատի մասին» 2018 թվականի հունվարի 16-ի ՀՕ-58-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 16-րդ կետ.

«16) ընթացիկ եզրակացություն՝ սույն օրենքով սահմանված կարգով իրականացված հաշվեքննության արդյունքում կազմված եւ պալատի կողմից հաստատված փաստաթուղթ.»,

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 17-րդ կետ.

«17) հաշվեքննության արձանագրություն՝ սույն օրենքով սահմանված կարգով հաշվեքննողի կողմից հաշվեքննության արդյունքների վերաբերյալ կազմված եւ իր ստորագրությամբ հաստատված փաստաթուղթ:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«Հոդված 6. Միջազգային համագործակցությունը եւ ստանդարտները

1. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննության մեթոդաբանության եւ դրա իրականացման առաջավոր փորձի փոխանակման նպատակով համագործակցում է արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող բարձրագույն աուդիտորական մարմինների եւ նրանց միջազգային կազմակերպությունների հետ:

2. Հաշվեքննիչ պալատը կարող է մշակել ուղեցույցներ, մեթոդաբանություն՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով:»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 9. Օրինականության և գաղտնիության սկզբունքները**

1. Հաշվեքննիչ պալատի անդամները և հաշվեքննողները.

1) գործում են միայն օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում.
2) չեն կարող տարածել իրենց հասանելի՝ օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվությունը:»:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 21-րդ կետ.

«21) հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատանքի ընդունվողների համար չափորոշիչները:»:

Հոդված 6. Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասում «քաղաքացիական ծառայողների» բառերից հետո լրացնել «, փորձագետների և մասնագետների» բառերը:

Հոդված 7. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասը ուժը կորցրած ճանաչել

Հոդված 8. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը հանել:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշվեքննիչ պալատի մասին» 2018 թվականի հունվարի 16-ի ՀՕ-58-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում՝

~~1) 13-րդ կետում «քաղաքացիական ծառայող» բառերից հետո լրացնել «, փորձագետ եւ մասնագետ» բառերը.~~

1~~2~~) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 16-րդ կետ.

«16) ընթացիկ եզրակացություն՝ սույն օրենքով սահմանված կարգով իրականացված հաշվեքննության արդյունքում կազմված եւ պալատի կողմից հաստատված փաստաթուղթ.»,

2~~3~~) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 17-րդ կետ.

«17) հաշվեքննության արձանագրություն ՝ սույն օրենքով սահմանված կարգով հաշվեքննողի կողմից հաշվեքննության արդյունքների վերաբերյալ կազմված եւ իր ստորագրությամբ հաստատված փաստաթուղթ:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«Հոդված 6. Միջազգային համագործակցությունը եւ ստանդարտները

1. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննության մեթոդաբանության եւ դրա իրականացման առաջավոր փորձի փոխանակման նպատակով համագործակցում է արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող բարձրագույն աուդիտորական մարմինների եւ նրանց միջազգային կազմակերպությունների հետ:

2. Հաշվեքննիչ պալատը կարող է մշակել ուղեցույցներ, մեթոդաբանություն՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով:»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

~~**«Հոդված 9. Օրինականության, գաղտնիության, ազնվության, բանիմացության սկզբունքները**~~

~~1. Հաշվեքննիչ պալատի անդամները եւ հաշվեքննողները՝ գործում են միայն օրենքով իրենց վերապահված գործառույթների շրջանակներում, չեն կարող տարածել իրենց հասանելի՝ օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվությունը, բազմակողմանի ուսումնասիրում են իրենց տրամադրված ողջ տեղեկատվությունը, պետք է ունենան համապատասխան որակավորումներ եւ գիտելիքներ:»:~~

«Հոդված 9. Օրինականության և գաղտնիության սկզբունքները

1. Հաշվեքննիչ պալատի անդամները և հաշվեքննողները.
1) գործում են միայն օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում.
2) չեն կարող տարածել իրենց հասանելի՝ օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվությունը:»:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. ~~Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:~~ Օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 21-րդ կետ.

«21) հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատանքի ընդունվողների համար չափորոշիչները:»:

Հոդված 6. Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասում «քաղաքացիական ծառայողների» բառերից հետո ~~փոխարինել~~ լրացնել «~~հաշվեքննողների~~, փորձագետների և մասնագետների» բառերը:

Հոդված 7. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասը ուժը կորցրած ճանաչել

Հոդված ~~7~~8. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը հանել:

Հոդված ~~8~~9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ԿՈԴ՝ Պ-052-28.09.2021,09.11.2021-ՖՎ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ կառավարություն	1. Հոդված 1	Նկատի ունենալով մասնագետի և փորձագետի կողմից հաշվեքննության իրականացմանը ներգրավվելու նպատակը և միևնույն ժամանակ հաշվի առնելով վերջիններիս լիազորությունները՝ հարկ ենք համարում նշել, որ ներկայացված Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով առաջարկվող կարգավորումը խնդրահարույց է և չի բխում «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով ամրագրված կարգավորումների տրամաբանությունից:	Ընդունվել է Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը հանվել է: Փոփոխվել է նախագծի 6-րդ հոդվածը	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	2. Հոդված 3	Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված կարգավորման բովանդակությունը որոշակի և հստակ չէ, այն թույլ չի տալիս հստակ պատկերացում կազմել	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն: Նախագծի 3-րդ հոդվածում առաջարկվող ազնվության և բանիմացության սկզբունքներն հանվել են, քանի որ այդ դրույթների բովանդակությունը, ըստ	Ընդունվել է

		այն մասին թե նույն հոդվածի 1-ին մասում նշված պահանջները՝ կոնկրետ որ սկզբունքի պահպանման են միտված, մասնավորապես օրինակ՝ առաջարկվող կարգավորումից պարզ չէ թե Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի վերնագրում նշված ազնվության սկզբունքը ինչպես, ինչ պահանջների պահպանմամբ է դրսևորվելու:	էության, ամրագրված են գործող օրենքում:	
ՀՀ կառավարություն	3. Հոդված 4	Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումը (օրենքի 10-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչելու մասին) լրացուցիչ հիմնավորման կարիք ունի	Ընդունվել է մասամբ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան դրույթը լրացվել է 16-րդ հոդվածում:	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	4. Հոդված 5	Քննարկել օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի փոխարեն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչելու հարցը	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	5. Հոդված 6	Անհրաժեշտ է վերանայել նաև Նախագծի 6-րդ հոդվածով Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասում առաջարկվող կարգավորումը:	Ընդունվել է Հոդվածը լրացվել է:	Ընդունվել է